

Արիութիւն · Արդարութիւն · Խոհեմութիւն
Լեր միշտ խոհեմ Արդարութեամբ
Նոյնպէս պսակ Արիութեան

# ՀԵՏԵՒԻ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ:

Յորում ընծեռի՝ զՄասանց Աշխարհի. և զՆշանաւոր Գաւառաց, Քաղաքաց, և Գետոց:

Արարեալ ի Նոյնոյ Հեղինակէ Մովսիսէ Խորենացւոյ, Քաջիմաստ և Ցուցահանճար Վարդապետէ:

Տպագրեցեալ հետեւապէս՝ Աշխատասիրութեամբ, և Արդեամբ այնոցիկ, որոց Անուանքն նշանագրեցան 'ի յսկզբանն:

Ի ՎԵՆԵՏԻԿ:



# ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ

## Մովսէսի Խորենացւոյ։

ՅԱՂԱԳՍ ԱՇԽԱՐհագրութեան՝ յԱծային գիրս ո՛չ ուրեք գտանեմք ոճով ասացեալ. այլ գոյզն ինչ՝ զո՛ւն ուրեք, և այն դժուարահաս՝ և տաժանելի։ Արդ՝ վս զի անհամբ դոցա եղեալ մեզ, յարտաքինն հարկաւորիմք ձեռնարկել. որով զաշխարհագրութիւն յարմարեցին ՚ի հանապարհորդութենէ՝ և ՚ի նաւարկութենէ, և ստուգեցին յերկրաչափութենէ. և ինքն երկրաչափութիւն՝ գտաւ յաստեղաբաշխութենէ։ Քանզի՝ ո՛չ եղեալ առաջին քըն խոկային, թէ ո՛րք տեղիք երկրի, ընդ որովք են կացեալք մասամբք երկնայնոյ բոլորակին. և զմեծութիւն

տունջեան և գիշերոյ ։ և զոր 'ի վերայ
երկրի , և զոր 'ի ներքոյ երկնից մշտա
բերելով , յայտնեն և զբնակութիւն
մարդկան ․ 'Ի միջօրական գծէն զգիծն
առնելով՝ ապարիզական չափու , ըստ
ճանապարհորդութեան , և ըստ նաւար-
կութեան ․ խմացեալ զկայանսն և զփոփո
խիլն , զայլ՝ այլ ուր այլապէս երևեալ ։
Քանզի 'ի մի այրեցածին բերին կենդա
նատեսակքն՝ մասանեն և ծաղկին ։ Իսկ յ
իարր արքն՝ գեր 'ի վերայ կացեալ լինի
ել կնի 'ի հիւսիսային կողմանսն՝ աստա
ոլ զըք հինգ հարիւր և երկու հնգերեկօք ։
Որ՞ անդէն թուելա կղզի , որ մինչև ըզ
հիւսիսականացն , և ծանուցելոյ երկ-
րի իբրև զգետ՝ ըստ լայնութեան չափու ,
ով 'ի միջօրէական շրջանակն երեքհա
րիւր և վաթսուներկու բիւրուք՝ վեցհա
զարեկօք մասամբք , հինգ հարիւր չա-
փուց ապարիզաց ․ մեծ շուրջունելու
թբ ։ Իսկ 'ի հարաւայինն՝ խոնարհի 'ի
առաջականն , և այլակերպ զայլսն երևե
ցուցանէ ․ ով Թէոդորոս Սամոսա
ցի պատմէ զՀնդկաց ․ թէ 'ի Լիմինեա
կոնն նաւելով յերկիրն , առնելով զՏա
ռանն միջերկնեայ՝ և զԼուդայ ընդ մէջ
կխուրայ ։ Իսկ յԱլիոյ ընդ մէջ նաւե
լով երկրականն , զՏանամբոս աստղ՝
որ է պայծ , 'ի նոցանէ երթեալ , և 'ի
մէջ նց Արուիկիկոն հնչական ․ և այլ
բաղում ինչ ։ Որ՞ զզամնարեալ զօտին

բերելով ընդ մեզ տիեզերականին՝ առ-
եթէօպացւոց ճանապարհորդութենէ՝
յԱկեզիբրայ աշխարհէն . և զՏուառն
ծայր է՛ ձմեռնային շաւղոյ՝ յաներևա-
կանն, և 'ի սուզականն կոյս ։ Քանզի և
յեօթնէ նահանգէն, մինն տուեալ է
հարաւային միջօրէականի գծին, և զայլ
ևս վեցն 'ի նմանէ յարջայինն կոյս ։
Այսպէս, և երկու ընդ այլինս ժամս ու-
նելով . երեք ընդ Աղէքսանդրիայ . կի-
սաժամու յառաջ մատուցեալ՝ ում և
մմ . Զորս Պտղոմոս, որ է միջին նահան-
գայն, ըստ գնդակին յայտնութենց ։
Հինգ ընդ Հռոմ . Վեց է Կոստանդը-
նուպօլիս . Եօթն ընդ Սկիւթիայ . և
մմ աշխարհաց դոցին դասեցան ։ Յորս
նոյն առնլի է զտիեզերաց տարրագրու-
թիս, նմանութի երկու գնտականն աստ-
ղականաւ, զկէս շրջանակին մեծի՝ ունե-
լով հարիւր և ութսուներեք բնակութի
մարդկան ։ Եւ զվերաբաշխութի առնե-
լով ժամանակականաւն, 'ի ձեռն երևե-
լոյ Աստուորոն, և Սկիւթիոն գործա-
րանաց . բայց կարևոր է Գէոպետռայ
առ'ի յամաքայափութի ։ Որ է Պտղո-
մէոս, և Կղօդէոս՝ չափեալ ասպարիզօք
զմմ բնակութի մարդկան . Երկայնու-
թէ յԱրևմտից սկիզբն առեալ՝ որ է
ծով անծանօթ Ովկիանոս, 'ի ծայրէ
անծանօթ աշխարհին մինչև յԱրևելս՝
յեզր անծանօթ երկրի, մատունս հա-

րիւր ութսուն ։ Այնպէս և լայնութիւն սկիզբն արարեալ յայրեցելոյ գօտւոյն՝ չափեալ դՀիւսիսի՛ , անծանօթ ծով և երկիր՝ մասունս վաթսուն և հինգ ։ և դարձեալ յայրեալ գօտւոյն ՚ի Հարաւկոյս չափեալ յանծանօթ երկիր, մասունս տասն և հինգ , լինիլ ամ լայնութեն՝ մասունս ութսուն ։ Իսկ առաւել յարտաքս կոյս քան զայս՝ չէ ուրուք զեզր երկրի տեսեալ , և կամ գիտացել որպ ասէ Պտղոմէոս ։ Այլ ծանօթ կամի երկիր՝ և ովկիանոս . յորս երկրագիր բոլորակին տիեզերագրութեան առնել Պապպոս Աղէքսանդրացւոյ համառօտաբար երկրագրութեան ։ Յորում մեր ծովբացն արարեալ զմեծամեծսն և ըղնշանաւորսն միայն . և զլափս որչափութեանցն , ոչ ըստ յատակի երկրի, այլ ըստ բարձրացեալ լերանց տեսութեան , ընդ օդս անցանելով ՚ի ձեռս գործարանաց . նկարելով զնշոյլս արեգական և լուսնի և աստեղաց , ըստ տանց իւրեանց եօթն նահանգացն փոփոխմանն սահմանաց ։ Իսկ է սահման՝ բան կարճառօտ յայտնիչ բնութեան ենթակայի րողութեն , որ զիւրն ՚ի ներքս փակէ՝ և զայլն ՚ի բացորոշէ՝ և չափէ զմանն ։ Իսկ է մասն՝ հինգ հարիւր ասպարէզ ։ և Ասպարէզն է հեռաւորութիւն , այսինքն է՝ վտաւան մի ։ Իսկ է ասպարէզն ըստ օդագնացութեան՝ քայլս հարիւր . և քայլն

վեց

վեց առն. և առն վեց մասն։ Մ՛ղոնն ասպարէզ մի. խոկ ասպարիզաց ասպարէզն՝ հարիւր և քառասուն երեք քայլ՝ և մղոնն է եօթն ասպարէզ. ոչ լինիլ գետնաչափութիւն՝ մղոնն հազար քայլ՝ և փարսախն երեք մղոն է. Բայց օգաչափութիւն՝ է մասն հինգհարիւր ասպարէզ ՚ի լայն երկրաչափութեան, և նոյն չափ է երկայնութիւնն չորեքկուսի. որպէս զի լինիլ մասին եօթանասուն և մի մղոն. չորք եօթն, քսանևութն։ Արդ՝ այս չափովս չափեցին զերկիր՝ և լծով, ակիզբն արարեալ յայրեցելոյ գաւառոյն՝ զոր կոչեն միջօրականն գիծ. յորում բնաւին ո՛չինչ բուսանի, յառաջ և մինչ յաճախելոյ ե՛ նման արեգականն՝ յամառնային եղանակն զեղանա ձմեռնային փոփոխել, և անդրէն դրձ Ա՛. որոյ ասացին զարեգակն շատ փորագոյն քան զերկիր զայս լինիլ. քանզի՝ վեցերորդ, կամ երրորդ ընկիլ արեգական. զերկուս նահանգան աշելով բովանդակութեն արեգական, այսինքն է՝ օթևանս քառասուն. յորմէ ըստ հեղման օգոյն նրբացեալ բորբոքութեան ասացին զայրեցական գօտին, և աստ և անդ։ Եւ նորա զՈվկիանոս ընդմիջելով ՚ի բնակութեան, և հարաւային կիսագնտին, զոր ընդդէմ երկրի կոչեցին, բնակելոյ երկիրս մեծութի՝ ոչ քան զմա, այլ հիւսիսային կիսագնտին՝

զոր կոչեն գոյացեալ ։ քանզի 'ի նմա սատացին փոքրագոյն գծագրեալ՝ վասն անձուկ գոլոյ բոլորակին . և զդէման նմանապէս նորին հարաւային եզրն՝ զոր կոչեն ցամաքեալ ։ Եւ ո՛չ միայն զայրեցեալ գօտեւոն ասեն զովկիանոս՝ և զամ երկրաւն շուրջ գոլ . զոր և Կոստանդինոս Անտիոքացի 'ի քրիստոնէական տաղագրութեան ասէ՝ յաղագս տապանակին անցելոյ՝ յարեւելեան երկրէն առ մեզ՝ 'ի մէջս կոյս ։ Բայց Պտղոմէոս՝ որոյ արք բազմաշրջութեան զամ սափեցին, ո՛չ ասեն շուրջ լինել զովկիանոս, այլ 'ի միոյ կողմանէ անկեան՝ հիւսիսոյ արեւմտից . և տարածի յարեւելակողմ ընդ հիւսիսի, յերկուց մասանցն՝ մասն մի ընդ արեւմուտս . 'ի հարաւակողմ 'ի չորս մասանցն, երեք մասունքն՝ որք 'ի նմանէ սկսեալք զանծանօթ երկրէ ասէ շրջապատեալ զընակութիւն մարդկայինս բնութեն ։ Եւ զերից ծովուցն մեծամեծաց՝ զՀնդկայնոյն ասեմ, և զՅունականէն, և զՎրկանին ծով . և երկիր բնակութեն մարդկան ասէ շուրջ լինել զնոքօք, և է մէջմարին ։

## ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ · ՀԱՄԱՌՕՏ ԵՐԿՐԱՉԱՓ ։

Քանզի զՅունականաւն, և ըզ զԿասպիականաւն, և միոյ իսկ արանց պատահեցաւ շուրջ անցանիլ. յորոյ վարկանիմ և զ՞նդ կայնոյն նոյնպէս լինիլ։ Եւ ո՛չ ոպ ումանք ասացին՝ Ովկիանոսի պարունակեալ զնմ. այլ համանեալ եմ Պտղոմեայ պատմութեան որոյ արք զայրեցեալ գոտեաւն անցին 'ի հարաւոյ կոյս. և զազդսն զայնոսիկ ճշգրտեցին. և զսահմանս ծարակաց նաւացափեալ՝ Յակինթինիբրայ մինչև 'ի լուսնի լեառն, և անդր ևս յանծանօթ երկիր։ Եւ շուրջ եկեալ զանծանօթ երկրաւն՝ յՈվկիանոսն մինչև ցՈվկիանոս՝ և դեռ առաւելն լռեաց. զորս ո՛չ երբեք կոխեաց ոտն, և կամ ետես ակն մարդոյ. որում Ա՟ծային գրոց 'ի ձայդան վկայութիւք. ոպ Յոբ ասէ. Թէ ծղեաց զհետոյն զորընչի. և եթէ՝ հրաման պատեաց զերես ջուրց, այսինքն՝ եթէ հրամանն Տն բաւական է ունիլ զեզր ջրոց անծանօթի ծովու. ո՛չ այլ ոռոգացեալ անցանել երկրի, և ո՛չ եզր սպառուածի անծանօթի երկրի պիտոյացեալ ջրոյ։ Բայց թէ և՛ է զանծանօթ երկրաւ ծով, կամ շուրջ զանծանօթիւ ծովու երկիր. մեք ոպ անհաս եղեալ

մասածութեանց՝ լուեալք. և գրեմք զայս միայն, զոր կոխեաց ոտն, և եատես ակն մարդոյ։

Որդ՝ սկսցուք ըստ Պապայ Աղէքսանդրացւոյ երկրագծութեան, որ ըստ ենքնագիր բոլորակին Կղօդիայ Պտղոմեայ տիեզերագրութեացն չափուց. զոր սկըսեալ յայրեցելոյ գօտւոյն կրկնակի, և ՚ի հիւսիսոյ, և ՚ի հարաւոյ։ Բայց սկըսանի յայրեալ գօտին՝ յանծանօթ երկրէն Սինեացւոց, անցանելով Է Տաբրոպէանի կղզւոյ ստորոտն. և ընդ Նեղոս գետոյ վտակն, և ընդ ամ Եթէօպայս՝ ըստ հարաւոյ կողմանէ Թւեոքիմաց լերինն, որ կոչի սատուծոց աթոռ. ընդ ձկնակեր Եթէօպայեցիսն, յանծանօթ երկիր. Իսկ յՈվկիանոսէ, զկողմամբք Զեփիւռոս հողմոյ սկսանի, քսանեմէկ մասանէ լայնութեան առ ձկնակերովք Եթէօպայեցովքն՝ և Թւեոքիմաց լերամբք. և պատէ զարևմուտս՝ մինչև իսպառ լայնութիւն չափու. և դառնայ առ հիւսիսի յարևելս՝ մինչև վաթսուն մասն լայնութեան, որ է հանդէպ Նկարկինետեան ծոցոյն Պոնտոսի առ Քեռսոնիւ. և անտի յառաջ անծանօթ երկիր։ Եւ պատէ զմնացեալ մասունսն հիւսիսոյ, և զարևելս, և զհարաւ՝ քսան մասն յարևելից մինչև ցնոյն Ովկիանոս. իսկ զաւելին քան զայս

սեկ

ոփկ՝ չէ՛ ուրուք տեսեալ, և կամ ծանուցեալ. վս այնորիկ անծանօթ կոչի երկիր։ Եւ Ովկիանոս ծանօթ նաւագնացութն. և կղզիք երեք հանդէպ Ներքսագոյն Լիբիոյ, որք Երանելեաց կըղզիք կոչին. և դոցա ըստ արևմտից վեց կղզի՝ այլ է. և դոցա 'ի հիւսիսային՝ չորս կղզիք հանդէպ Մօրիտանեաց, և մի նեղուցն՝ որ կոչի սեպտէ, այսինքն եօթնեակ. քանզի զեօթն մղոն ունի լայնութն տեղւոյն՝ որ գետաբար ելանէ յՈվկիանոսէ, և ծնանի զյունաց ծովն. որոյ յարևմտից կղզի կայ այլ մի ևս։ Իսկ Ովկիանոս երթեալ ընդ հիւսիսի, և դարձեալ ընդ արևելս՝ առնէ երկուս կղզիս մեծամեծս, որք կոչին Բրիտանացւոց աշխարհք, և զԹուղիս մեծ կղզի, որոյ հատուածն անծանօթ երկիր համարեալ է. և կղզի մի այլ՝ որ Սկանդրէ անուանի, յորում Գունթք լեալք են. և քան զայս կղզիս այլ նաւագնացութն չկայ, և ո՛չ հասեալ է ոտն մարդոյ. վս այնորիկ կոչի անծանօթ ծով։ Մատնեն և գետք քսանևմէկ՝ յարևմտէ յՈվկիանոս։

Իսկ երեք ծովք, որովք երկիր շուրջ է։ Առաջին ծով՝ Հնդկային. որ կոչի կարմիր ծով, յորմէ ծոցոյ ելանեն պարսից, և արաբացւոց ծովք. և սահմանի 'ի հարաւոյ անբնակ, և անծանօթ

երկրաւ ։ իսկ յարեւմտից՝ Անեմեցւոց աշխարհաւ . և 'ի հիւսիսոյ՝ Հնդկօք , և Պարսիւք , և Արաբացօք ։ իսկ յարեւմտից՝ Եգիպտացօք , և Եթէովպացօք ։

Երկրորդ ծովն Յունաց՝ որ ծնանի յՈվկիանոսէ , և լայնացեալ ձգի մինչև յԱսորիս. և սահմանի յարեւելից՝ Ասորօք , և փիւնիկեցօք ։ իսկ յարեւելից Հրէաստանիւ հարաւոյ մինչև յԵգիպտոս ։ իսկ յարեւելից հիւսիսոյ՝ միջերրօք մինչև ցՔաղկեդոն , յորմէ ծոցոյ ելանէ Պոնտոսի ծովն ։ իսկ 'ի հիւսիսոյ՝ Եւրոպիւ մինչև ցՍեպտէ ։ իսկ 'ի հարաւոյ՝ Լիբիիւ մինչև ցնոյն Սեպտէ ։

Երրորդ ծովն Վրկանի, որ կոչի Կասբից ծով . և ձգի երկայնութիւն նր 'ի բերանոյ Երասխայ, և կուր գետոյ մինչև ցըմուտս Պօղէմիւէօմէտայ գետոյ ։ Եւ սահմանի յարեւմտից՝ Հայօք. իսկ յարեւմտից հիւսիսոյ Աղուանիւք , և Մասքթօք ։ իսկ յարեւելից հիւսիսոյ Սկիւթացօք . իսկ յարեւելից ազգաւն՝ որ կոչի Արիականք ամբաստակէք։ իսկ յարեւելից հարաւոյ՝ Վրկան ծով։ իսկ 'ի հարաւոյ՝ Մարօք , Գելփօք ; և Գելմօք , և Կասբիւք . մինչև 'ի մուտս Երասխայ ։

Նոյնպէս և զերկիր բաժանեն՝ յերիս . յԵւրոպիա , 'ի Լիբիա , և յԱսիա . և ունի զարեւմտակն հիւսիսային կողմանէ

Եւ՞րոպիս մինչեւ 'ի Տօնաւիս գետ : Եւ՞
զարեւմտական հարաւայնով կողմամբ Լի
բիայ' մինչեւ ցկիրճիր ծովն : Իսկ այսոցիկ
սահմանաց յարեւելակողմ' զհիւսիս եւ
զհարաւ զմէջ' Ասիա ունի մինչեւ ցանծա
նօթ երկիր . մա որոյ մեծագոյն է բան
զայլ հատուածսն : Իսկ միջոց ծի բնա
կաւն մարդկան Պտղոմէոս' զԵրջանիկն
զԱրաբիայ ասէ . բայց ես ոչ հաւա_
տամ : բանզի' Աւետարանն զԵրջանիկն
Արաբիայ' ծագս երկրի կոչէ, ուստի եկն
դշխոյն հարաւոյ : Բայց մեք լուի' որ ըղ
միաջափ հեռաւորացութեն ունի 'ի ծայ
րիցն, եւ յեզերացն . եւ այն է յԵէմ, ո_
րում եւ անծայինք գիրք վկայեն . թէ_
պէտ զչափուցն Պտղոմէայ երկայնա_
տարած յարեւելս կոյս : Աւ ըլ զերկուս
չափս 'ի մի դնելով . նկարագրեսցուք
այսպէս . եւ հարաւայինն ուլթ աւելի
գայ քան զհիւսիսայինն' ըստ Պտղոմէա
կան չափուն . զոր երկու 'ի մի եդեալ,
կերպագրեսցոք զերկայնութիւն չա_
փուցն, ութսուն ամբողջ պահեսցուք,
մա զի նեղ է . եւ զհարիւրն կրկնեսցուք'
լինի չիսուն , եւ այնպէս նմանագրես_
ցուք : Նոյնդունակ եւ ըստ հարաւոյ
յայլեցական գօտեաւն կրկնեսցուք
զուլթն 'ի չորս . եւ բերէ սոուդապէս
զնմանութեն զՊտղոմէական երկրագրու
թենն : Եւ՞ արդ' որովհետեւ բովանդա
կեցաք զհասարակախօսութենդ . այսու

հետև սկսցուք պատմել զաշխարհս առ-
անձինն՝ ըստ գրոց տեղագրութեանցն Պա-
պայ աղեքսանդրացւոյ . սկիզբն առա-
րեալ յարևմտէ յՈվկիանոսէ , 'ի Սպա-
նիոյ աշխարհէ :

## Ասպանիոյ աշխարհն Եւրոպիոյ :

Սպանիա՝ է երեք անկիւնի իմն ձևով, կալով 'ի մէջ ծովուց որպէս կղզի . սահմանի յարևմտից, և հիւսիսոյ՝ Ովկիանոսիւ . իսկ յարևելից Պիրենէ լերամբ . իսկ 'ի հարաւոյ Յունաց ծովուն : Եւ բաժանի նա յերիս աշխարհս փոքունս . որք ունին գաւառս բազումս, և քաղաքս . զորս անուամբ յիշատակել աշխատութիւն անշահ համարեցաք : Եւ ոչ միայն զգաւառս, և զքաղաքս, այլև խորհեցաք միայն գրել զերկիրս անուանիս՝ և զգետս հզօրս, և զքաղաքս հռչակաւորս . և եթէ այլ ինչ նշանաւոր իցէ : Թողլով 'ի բաց զթիւս, և զչափս . և զմանրամասնաբար պատմութիւնս :

Բրիտանացւոց՝ որք են երկու կղզիք 'ի հիւսիսային Ովկիանոսի 'ի վերոյ կողմանէ Սպանիոյ : Եւ անուն յարևմտեան կղզւոյն՝ Իռլումբատնիա . և է զարեհատաձև ձղձկէն, յորում գետք հզօրք տան

և վեց, և ազգք բազումք։ Իսկ անուն արևելեայն կղզւոյն՝ Արիուխոն, որ է մեծ քան զնա, և է աղրկաձև բազմաճիւղ․ յորում գետք հզօրք քսան և հինգ, և յոյժ մեծամեծ անտառք․ և շուրջ զկղզեաւն մանունք կղզիք՝ քառասուն և հինգ, և Թուղիս մեծ կղզի։

Գաղղիա՝ յարևելից կալով Սպանիայ․ և սահմանի հիւսիսոյ, և յարևմտից Ովկիանոսին․ իսկ ՚ի հարաւոյ յարևելից Յունաց ծովուն։ Է՛ բաժանի Գաղղիա յաշխարհս չորս, յորում լերինք մեծք, և գետք հզօրք քսան և հինգ․ և կղզիք շուրջ զիւրեաւ՝ տասն և չորս։ Ունի քաղաքս, և ազգս բազումս՝ և հզօրս, զազգն Փռանգաց։ Լինի ՚ի նմա դօնջ սպիտակ և սպանօղ։

Գերմանիա, յելից կալով Գաղղիայ առ հիւսիսային Ովկիանոսին՝ մինչև ցՍարմատացւոց լերինս, և ցԴանուբ գետ, որ է Յօղու Ռուսայ․ Գայ և մտանէ ՚ի Պոնտոս ծովն․ և սա մեծ է քան զՏօնաւիս։ Ունի Գերմանիա ազգս եօթն, յորոց մինն Գունդք։ Ունի լերինս անուանիս երեք։ ունի և գետս հզօրս՝ տասն և մի, և կղզիս ինն․ և անտառս չորս՝ յոյժ մեծամեծս․ ունի և զերկաթակորութիւն։

Դալմատիա՝ յելից կայով Գռոատիայ, և առ երի Գերմանիայ։ Եւ սահմանի յարևմտից՝ ակամբք Գոմորայ գետոյ. իսկ 'ի հիւսիսոյ և յարևելից՝ նոյն խանորայ գարձանաձորն. իսկ 'ի հարաւոյ՝ Յունիան ծովովն։ Եւ ունի Դալմատիա աշխարհս վեց, քաղաքս, և գաւառս բազումս. ունի և լերինս վեց, և գետս քսան. և կղզիս եօթն։ Եւ ունի 'ի Դալմատիայ գաւառն, ամ զեղն Բանոնոս անուն, որ զկուն ձգէ որսորդաց իւրոց, և այլն։

Իտալիայ՝ է յարևելից Գաղղիայ, և առ երի Դալմատիայ 'ի հիւսիսոյ կուսէ։ Եւ սահմանի ընդ արևմտից և հիւսիսոյ Հելուետացօք, և Ոկոէ լերամբք. իսկ ընդ հիւսիսոյ և յարևելից, Յունական և Ադրիատիկեան խորշիւն. իսկ ընդ հարաւոյ՝ Միջերկրական Պլիմագոսիւն։ Եւ ունի Իտալիայ աշխարհս վեց. քաղաքս և գաւառս բազումս։ ունի և լերինս. և գետս տասնևվեց. և կղզիս տասնևեօթն. յորոց մինն Պօնտիայ, ուստի Պիղատոսն էր։ Ունի և մայրաքաղաքս երկուս. զհռչակաւորն Որենայ, և զմեծն Հռոմ։ Բայց են յԻտալիայ և այլք աշխարհք Կօսիկ անուն, 'ի Սիկիլոնոս կղզւոյն, չորսհարիւր մղոնաւ շուրջ պարատելով. յորում գաւառք տասնևչորք, և գետք վեց, և մի Ոսկի անուն

լեառն, ուր ոսկի, և արծաթն համանի՝
երկրաբուսակ իբրև ծնեբեկ ։

Սարգոնիա՝ է մեծ կղզի, հուպ կալով
'ի Սկիւռնոս կղզին ընդ հարաւոյ. եր
կայն թեւով 'ի հիւսիսոյ 'ի հարաւկոյս։
Եւ ունի գետս չորս. և լերինս դըժ
ուարս, և ամուր տեղիս. յորում քա
ղաքք ինն, և գաւառք քսան, մանունք
կղզիք ինն. և շրջապատութի Սարգո
նիոյ՝ եօթնհարիւր ութսուն մղոն։

Սիկիլիա՝ է մեծ կղզի, յարևելից կա_
լով Սարգոնիոյ կղզւոյն։ Եւ է Սիկի
լիա երեք անկիւնի ձեւով. 'ի ծայրէ
'ի ծայր հարիւր մղոն։ յորում գաւառք
եօթն. քաղաքք ինն. գետք տասնե_
ութն. կղզիք տասն և վեց։ Լերինք եր
կու, և Պառթենոս՝ յորմէ գետք բղը
խին, և Բուռկանոս՝ որոյ կատարն հը
րով տոչորի. և է Սիկիլիա յոյժ ար_
գաւանդ։

Սարմատացւոց՝ Ց, որոյ հատարակն յա
րևելից կալով Ջաղուրայ, որ է Պուլ
ղարք Գերմանացւոց, առ Հիւսիսային
Ովկիանոսիւ՝ մինչև ցանծանօթ երկիր.
ղօր Պալարք կոչեն, և Ցուպիա լեառն,
յորմէ ելանէ Տօնաւիս գետ։ Եւ ունի
Սարմատիա աշխարհս փոքունս, և քրիս
տոնէից՝ զՔերսոնն խրիմն. որ է ցամաք

լերինս, և գետս, և գաւառս, և քա-ղաքս, և կղզիս բազումս յոյժ: Ունի և մեհեանս երիս, զԻռայ (չհ—է) և զԱրտեմիս, և զՊօսեդոնոս. ունի և մայրաքաղաք զհոյակապն՝ զԱթէնս. ունի և ջուրս 'ի կղզւոյն զՄ՛իւռս, որ անպատճառ այսր անդր հոսի, ուր խո-բառայղ եղև Արիստոտէլ:

## Աշխարհն Լիբէացւոց ոռբն :

Առաջինն է՝ որ է, Ունկուրուրա Մօրիտանիայ Տինգանի, տարածի 'ի Սեպտէէ առ հորաւակողմ արևմտեայ Ովկիանոսի: Եւ ունի Մօրիտանիայ լերինս վեց. գետս տասներկուս. ազգս տասնևվեց. և զՊտղոմիոն, որ է հրագոյն դաշտ: Մօրատառնիայն կիսառայն իւրայն, յետ կալով Տինգոնոյ և տարածանի 'ի հարաւակողմ՝ առ 'ի Շեղղելէօք. Եւ ունի գետս տասն և եօթն, և փոքր լեռս երեք, և լերինս հինգ. և քաղաքս բազումս, և գաւառս քսանևհինգ, և զպղնձափորանոց երկիրն: Լինի 'ի լերինս այսմիկ՝ ընտիր Տինաքառիս. այսինքն է՝ դեղ կարմիր:

Ափրիկէ՝ յետ կալով Մօրիտանիոյ առ ծովեզերբն: Եւ բաժանի Ափրիկէ յերկուս աշխարհս. և մի այլ առանձ

լերինս, և գետս, և գաւառս, և քաղաքս, և կղզիս բազումս յոյժ։ Ունի և մեհենանս երիս, զԽռայ (չհ—է) և զԱրտեմիս, և զԳօնեգոնոս. ունի և մայրաքաղաք զհոյակապն՝ զԱթէնս. ունի և ջուրս 'ի կղզւոջն զՄ՛իւոս, որ անպատճառ այսր անդր հոսի, ուր խոբառոյղ եղև Արիստոտէլ։

Աշխարհ Լիբէացւոց ոռին։

ԱՈւջիննէ՝ որ է, Ուինկուրուրա Մօրիտանիայ Տինգանի, տարածի 'ի Սեպտէէ առ հրաւակոյս արևմտեայ Ովկկիանոսի։ Եւ ունի Մօրիտանիայ լերինս վեց. գետս տասնևերեք. ազգս տասնևվեց. և զԳռոնիոն, որ է հրագոյն գաղտ։ Մօրատտանիայի Կեսառայն խայն, յելից կալով Տիգոնւոյ և տարածանի 'ի հարաւակոյս՝ առ 'ի Շեղղելեօք։ Եւ ունի գետս տասն և եօթն, և փոքր լիճս երեք, և լերինս հինգ. և քաղաքս բազումս, և գաւառս բաժանեհինգ, և զպղնձափորանոց երկիրն։ Լինի 'ի լերինս այսմիկ՝ ընտիր Տենաքառիս. այսինքն է՝ դեղ կարմիր։

Ափրիկէ՝ յելից կալով Մօրիտանիոյ առ ծովեզերբն։ Եւ բաժանի Ափրիկէ յերկուս աշխարհս. և մի այլ առանձ

նակի, որ Տրապօլիս անուանի ։ Ե՛ ու-
նի Աֆրիկէ լերինս ութն . գետս տասն
և ինն . գաւառս քառասուն և մի . լիճս
ութն . ծովս եօթն . կղզիս տասն և
վեց . և քաղաքս բազումս . և զԿար-
կեդոնեայ մայրաքաղաք ։ Լինի յԱֆ-
րիկէ՝ բանջար ինչ Լոտոս անուն. զոր
եթէ որ ուտէ, զհայրենիս մոռանայ.
լինի անդ և կարմիր յակինդ՝ և եախուռ.
լինի անդ. Սեռամթ՝ բոյս փափուկ ՛ի
ծովու, որ ելեալ յարևէ յօդ՝ կարծրա
ցեալ քարանայ ։

Կիւռենականն, որ է Պենտապօղիս՝
յելից կալով Աֆրիկոյ յերի ծովե-
զեր ։ Ե՛ ունի Պենտապօլիս՝ գաւառս
տասնևչինգ . և գետս երեք . և լիճ
մի . կղզիս երկու . և քաղաքս բազումս,
և Հերակլայն լերինս . և զԱնդաբեր
երկիրն . և անդիս ինչ նորակերպս դա-
զանս . և զերբե կորնական պարտեզ-
աբն . և քարայրս Լոկենեցւոց ։

Մարմարականն Լիբիա՝ և ճմ Եգիպ-
տոս, յելից կալով Կիւռենականն Տին՝ և
առ երի ծովեզերին յարևմուտ՝ խորշ երկ-
րոյն կոյմիր ծովուն. և ունի Եգիպտոս լե-
րինս տասն և երկու . և գետս երկու չի-
նուածոյս . և լիճս երեք ինքնեղս . և ե-
րեք լիճք այլք՝ զորս Նեղոսի վտակքն
առնեն . և գետ ունի զՆեղոս, որ է

Գետոն. ունի և գաւառս քառասուն և մի. և քաղաքս բազումս. և մայրաքաղաք՝ զմեծն Աղեքսանդրիայ: Ունի և կղզիս ՚ի Յունաց ծովուն՝ տասն և մի. և ՚ի Կարմիր ծովուն՝ երեք. ունի և զաւաղուտ, և զանանձրև երկիրն:

Ենտոս Լիբէ, որ Թարգմանի Ներքսագոյն Լիբէ, յելից կալով արևմտական Ովկիանոսի՝ յերի կալով Ափրիկոյ. և սահմանի Ներքսագոյն Եթէօպաւ առ այրեցելով գօտեւան: Եւ՞ ունի Ենտոս Լիբէ՝ լերինս ութն. գետս քըսան և մէկ. լիճս վեց. կղզիս տասն և երեք: Եւ՞ ճարակեն Ենտոս Լիբէ՝ ազգք տասն և վեց: լինին և Թզուկք՝ մօտ Ովկիանոսի ՚ի Սպիտակ լերինն: Անցանեն ընդ Ենտոս Լիբիայ՝ և Ոսկեղջերքն գազանք յՈվկիանոս ՚ի Նեղոս. ուր Կոկորդիլոս գազանն, և այլք գազանք՝ անցանեն ընդ Ենտոս Լիբիա, որք կոչին Նափինթք. մարդակերպք են և գինէսէրք:

Միջինն Եթէօպիա՝ յերի կալով Ենտոս Լիբիոյ, և վերնոյն Եգիպտոսի առ Կարմիր ծովուն, անցանելով զայրեցելով գօտեւան ՚ի հարաւակողմ առներքսագոյն Եթէօպացւոցն՝ ցնոյն սահման Ենտոս Լիբիոյ: Եւ՞ ունի Եթէօպիա փոքր աշխարհս երեք. զԲառ-

բառնայ, և զԱջանիայ, և զԱռմօլօգա յերկիր. և գաւառս ազգաց երեսուն և վեց: ունի և գետս երեք. և լերինս տասն. ունի և կղզիս յԱրաբացւոց ծո ցին՝ քսանևհինգ: և ունի զՄռնաբեր երկիր, և զԽնկաբեր, և զԿինամոմո նաբեր գաւառսն:

Ներքին Եթէօպիայ՝ սկսանի յարևմը տական անծանօթ երկրէ, յերի կալով Ովկիանոսի, և Ենտոս Լիբիոյ. և 'ի հարաւոյ սահմանի անծանօթ երկրաւ. առ որով բնակեալք են Երեկորնական քըն Եթէօպայեցիք՝ 'ի հարաւոյ այրե ցելոյ գօտւոյ կողմանէ, մերկք, վէշա պամարտք: Եւ յերի նոցա ըստ հիւսի սոյ առ Ովկիանոսին՝ Ձկնակեր Եթէօ պացիքն. յորում կենդանի ինչ՝ Տու բուս անուն, ոչխարանման՝ երկակեն ցաղ՝ և ձկնակեր: Առ որով Աթակէնք Եթէօպացիք. յորում առիւծաշուն գազանն: Որոյ ըստ հիւսիսոյ յերի՝ Եղ ջերք Եթէօպացիք, յորում կենդանի ինչ՝ նման Զամալուխոյ, մարդամարտն, և անուշահոտ: Առ որով Գւերպիկէ, և Գւերմանեայք. յորում աղծառատեր՝ մարդամարտք՝ ընձուղտք: Որոց 'ի հա րաւոյ մինչև ցՆեղոս աշխարհ մի Ե. թէօպացւոց. յորում Փիղք սպիտակք. Եղջերականջիթք, և Վադերք. յորոց յա րևելից լերինն՝ յորում Վադերաձիք,

և Այծամարդք, և ինձք գեղեցկախայ
տուցք ։ Եւ՞ սոցա 'ի հարաւոյ՝ աշխարհ
մի առ անծանօթ երկրաւ ․ յորում է
գազան ինչ՝ կանացի ունելով զգլուխ
և ձեռս, և զանձն չորքոտանի ․ այլ մար
դակերպ ինչ մերկ գազան շանակնճիթ՝
և մծականջ, ագեւոր՝ ոտք ղաուխծա_
կապիկ ։ Որոց յետ՝ բանձրագագա_
թունք Եթէօպացիք, և այլք՝ մինչև
ցլուանի լեառն ․ յորում լինին քօշք որ
պիտակք՝ զօրաւորք՝ և բռնաւորք ․ ո_
րոց յելից կուսէ՝ Գարամացիք, և 'ի ներ
քոյ սոցա՝ մարդակեր Եթէօպացիք ․ յո
րում գազան ինչ հրաջունչ՝ վարազա_
նման ․ և Սաղամանդր գազան, որ նը
ման է կովկիդինցի ․ անցանէ ընդ հուր՝
և չիջուցանէ զնա ։

## Աշխարհ ընդհանուր Ասիայոյ ։

Առաջին բաժին երկրի՝ ընդհա
նուր Ասիա է, և ունի կող
մունս ․ և նախ զկողմն մի_
ջերկրայս, որք մտանեն ընդ
մէջ Յունաց ծովուն, և Պոնտոսի ։

Բիւթանիայ, յելից կալով Թագաւո_
րական քաղաքին Կոստանդինուպօլսի ․
և ունի Բիւթանիայ՝ լերինս, և գետս,
և լիճս, և կղզիս ․ ունի և մայրաքա_
ղաքս մեծամեծս երեք՝ Նիկիայ ․ Ըղ

Քաղկեդոն ․ զՆիկոմիդիայ՝ որք ունին ընդ ինքեանս քաղաքս տասն և երեք ․ և զգիւղաքաղաքս ծովեզերայս, և զմա ձառատունըս ։ Լինի և 'ի Բիւթանիայ հող սպիտակ, զոր մանր աղացեալ և ցանեալ 'ի քանդուկս 'ի վերայ ցորենոյ, ճճի ոչ ուտէ ։

Միւսիայ՝ որ կոչի Ելլեսպոնտոս, առ երի կալով Բիւթանիոյ ․ և ունի Միւսիայ՝ լերինս երեք ․ գետս հինգ ․ կղզիս երկու ․ քաղաքս քառասուն և մէկ ․ և մայրաքաղաք ծովեզերայ՝ զԿիզիկոն, յորում տաճարն է Աստուծոյ անուանեալ Հրաշից ։

Ասիա առանձնակի՝ յերի կալով Միւսոյ առ ծովուն ․ և ունի Ասիա փոքր աշխարհս չորս ․ զԼիդիայ ․ զԵւոնիա ․ (ՂԵ-ՂՒ-ԻՈ) զՅոյնս ․ զԿաթիայ ։ Ունի Ասիա լերինս եօթն ․ կղզիս տասն ․ գետս եօթն ․ քաղաքս տասն և հինգ ․ և Մայրաքաղաք զԵփեսոս, և այլ ևս վեց ։ Եւ լինի յԱսիայ՝ Մաղտաքէ 'ի խըժէ ծառոյ ։

Լիկիա՝ յելից կալով Ասիոյ ։ և ունի Լիկիայ լերինս երկու ․ գետս երեք ․ կղզիս հինգ ․ քաղաքս երիս ․ և մայրաքաղաք՝ զՄիւռնիայ ․ և լինի Լիկիայ խունկ Զիւղգին, և Տրամէ ․ 'ի ծառոյ

ծորելոյ՝ որպէս զխիժ, լայն ոչ մեծ, և որպէս մրուր:

Փիւնիկիայ՝ յելից կալով առանձնական Ասորւոյ յերի Լիբիոյ: և ունի յինքեան փոքրիկս աշխարհս երիս. զՓիւնիկիայ՝ որ ունի մայրաքաղաք զԱնտիոքիայ, ուր ասեն շինեալ զտապանն Նոյի, և այլ քաղաք բազում և վեց: նաև՝ յորոց մայրաքաղաք Լաւոդիկիայ, և այլք քաղաքք փառաւորուն, և աշխարհք երեք. Մադիանայ. որոյ Մայրաքաղաք Սիդոնիա. և այլ քաղաքք երեսունք: Եւ ունի լեառն զԼիբանոն. և գետս հինգ. և լիճս տասն և չորս. և դաշտս մեծամեծս:

Ոնորիաս՝ յելից կալով Բիւթանիոյ. և առ երի Փռիւգիոյ, մինչև ցՊոնտոսի ծովն: Եւ ունի Ոնորիայ՝ մայրաքաղաք զԿղօդիուպօլիս. ընդ որով այլ քաղաքք հինգ. և գետ ունի զՊարթենիոս զերեք վտակեան. յայսմ աշխարհի երդնուլին դեղ՝ վասն այնչափի ցրտութեանն:

Փեղպագոնիայ՝ յելից կալով Ոնորիայ աշխարհին, որ է 'ի ծովուն Պոնտոսի: ունի գետս երկու. և մայրաքաղաք զԳերմանուպօլիս. որոյ ընդդէմ Գանգրը. և քաղաքս հինգ. և ընդ-

դըս տասն և մի. գաւառս վաթսուն և մէկ։

Գաղատիայ առաջինն՝ յելից կալով Փռիւգիայ, և առ երի Պափլագո-նիայ. և լեառն ունի զերկրորդ Ոփդէ-մոն. և գետ Ջինոն, որ յառաջասա-ցեալ աշխարհս լծափի։

Գաղատիայ երկրորդ՝ յելից կալով Փռ-իւգիայ. և առ երի առաջնոյ Գա-ղատիայ, մինչև 'ի Պամփիւլիայ. Ունի լերինս, և գետս մանունս, որք յառա-ջասացեալ գետն անկանին, և որք ըղ-լինս առնեն։

Պամփիւլիայ՝ յելից կալով Լիկիայ, և առ երի Գաղատիայ, ունի յինքեան աշխարհս փոքունս հինգ. և լեառն մէկ. գետս երեք. և կղզիս երկու. և քաղաքս։ Լինի 'ի սմա խունկ Տիւռա-կիթոյ՝ 'ի փորոյ կերածոյ ձիձոյ։

Սորեայ՝ յելից կալով Պամփիւլիայ, առ երի ծովուն հանդէպ Կիպրոս կղզւոյ. և ունի լեառն զՏօրոս։ Եւ գետս ըղ Ոփիմագոս. և է 'ի նմա մայրաքաղաք Սելեկիա. և այլ ք քաղաքք քսանևչորս. և լինի յայսմիկ խունկ դիւրակոծոյս Ոպոպոմփին, կաղամբի. ամենեքեն 'ի ծառոյ ծորնչոյ 'ի ձձայ մեայ կերպածոյ։

Լիկոնիա՝ յելից կալով Գաղատիոյ, և առ երի Սօրիոյ, ունելով զտարածումն իւր 'ի դաշտս ընդարձակս. և զնոյն գետ. և լերինս փոքունս. և լիճս երկս։

Կապադովկիայ երկրորդ, յելից կալով Գաղատիոյ, և առ երի Լիկոնիոյ. ունելով լերինս մանունս, և գետս. և լայնութեն տարածել 'ի դաշտս արձակս։

Հելինոպոնտոս, յելից կալով Պամփղագոնիոյ, և առ երի Կապադովկիոյ՝ և ծովու. ունի լերինս փոքունս բազումս. և գետս Հզօրս, և Նիւռիս. և այլ մանունս։

Կապադովկիայ առաջին, յելից կալով երկրորդ Կապադովկիոյ, և առ երի Պոլեմոնական Պոնտոսին։ Ունի լեառն զԱնտիտօրոս, և այլս փոքունս. և գետս՝ զՄեղոս, և զԱլիս։

Պոնտոս Պոլեմոնական, յելից կալով Հելինոպոնտոսի, առ երի Պոնտոսի ծովու. ունի լերինս փոքունս և դժուարալայրս. և գետս զԹոռամոնոս, և այլ մանունս։

Կիլիկէ ՟Բ՟ ինքեան առաջին և երկրորդ՝ յելից կալով Լիկոնիոյ, և Սօրիոյ՝ յերի

Կապադովկիոյ առաջնոյ ։ լեառն ունի զՏօրոս․ և գետս վեց․ և մայրաքաղաքս երկու՝ զՏարսոն, և զԱնարզաբայ, և այլ քաղաքս բազումս․ և բերդս երեքհարիւր վաթսուն և հինգ․ և զդրունս երկու՝ ելանելոյ ասորեաց։ Եւ է Կիլիկէ՝ ամենաբեր, հանգոյն երկրին յորդանանու ։

Կիպրոս կղզի՝ յելից կողմ Պամփիւլիական Պիղագոսին՝ առ երի Սորիայ, և Կիլիկիոյ․ և ունի Կիպրոս լեառն զՈլիմպոս․ և գետս երեք ։ Լինի ՚ի նմա Աղանգանոյն ՚ի ցօղոյ անկեալ զխառամ կաուցիթափիւ վարոցս՝ և մորուս քօշից։ Եւ ունի Կիպրոս զսահմանս իւր յերկայն՝ մասունս երեքհարիւր երեսուն մղոն․ իսկ ՚ի լայնն՝ մասն մի ։

Հայք՝ յելից կողմ Լիկիոյ առ Տօրոս լերամբ․ և ունի լերինս երիս․ գետս չորս․ և դրունս երկուս՝ ելանելոյ Ասորւոց ։

Առաջին հայք՝ յելից կողմ առաջնոյ Կապադովկիոյ՝ առ երի երրորդ հայոց․ և սահմանի յելից Եփրատաւ․ և լեառն ունի զԱրգէոս․ և գետ զԱլիս․ և այլ մանունս ։

Երրորդ Հայք են, որք կան յելից

Կապադովկիոյ. և երկայն տարածի մին-
չև ցԵփրատ. և ունի այլ գետս եր-
կու. և լերինս բազումս մեծամեծս քը-
սան և երկու :

Պոնտոս Կապադովկիոյ (Կապադովկիոյ). յելից կողմ Պողեմոնեան Պոնտա-
ցին՝ առ երի ծովուն ՚ի ցամաքական լե-
րինան. որք բաժանեն ընդ նա, և ը-
Մեծ Հայս : ունի լերինս երիս. և
գետս չորս :

Աշխ. չորեքտասաներորդ Եւրոպիոյ աշխարհացոյց

Սարմատացւոց Ծին Հասարակն է,
որ բաժանեալ է արևելեան ծո-
վուն, և Ցուպիսւ լերամբ, և Տա-
նիս գետով, և Մէոտիս ծովակաւ. ի
մէտ ընդ Կովկասային լերինն առ
Վրօք, և Աղուանիւք, մինչև ցԿասպի
ծովն: Եւ ունի Սարմատիոյ լերինս՝ ը-
Ըոթարինն, և զՉիւսկոնն. և զայս
լերինս. և գետս բազումս. զեօթա-
նասնավոտակն Էթիլ. յորում ամրա-
նայ ազգն Բարսղեաց : Եւ բնակին ՚ի
Սարմատիոյ ազգք բազումք. որք են
այսոքիկ : Խազիրք. Բուլխք. Բար-
սեղք. Աճխեզք. Ափխազք Թագաւո-
րական. Սարմատք. Չիակերք. Նախ-
ճամատեանք. Ոզլակերք. Սևաբկա-
ցիկ. Սևաթոխիգացիք. Ամազոնք.

Աղու՛

Աղուանք. Խնբուրք. Քուգետք. Ակիւմիք. Արգաւետք. Մարգոյլք. Թակուլք. Արգողք. Դաճանք. Փինչք. Դուժալք. Հոնք. Ոսփուրք. Ծանարք՝ յորում Աղուան դուռն, և Ծաքան դուռն. Լփուչք. Խուչք. Քուսոք. Մարգակերք. Ցխաւատք. Գուգամակարք. Դուճիճակք. Գիգայք. Ղէք. Կատապատականք. Աղուատականք. Խենօթք. Ճիղպք. Ծիւղայք. Խեղայք. Կազրք. Փուխք. Ճրուանք. Խառանք. Թաւապարոյք. Հեճմատակք. Իժմաղք. Փասխք. Խուխափերոնաք. Բայքանք. Մաղքութք. Ոնչև ցկատրից ծովն, յորս և քաղուքն կովկասու հայի. ուր ածեալ է պախայն Դարբանդայ. աշտարակ աշագին 'ի ծովուն կացեալ. իսկ 'ի հիւսիսոյ նորա՝ Հոնք, և քաղաք նոցա Վարաչան, և այլք ընդ նմա. և Թագաւորն հիւսիսոյ է Խականն, որ է Խազրաց տէր. և դշխոյն Թագուհի է Խաթունն, որ է կինն Խականայ 'ի Բարսղաց ազգէն:

Սողբիս է՝ այսինքն է Եգեր, յելից կալով Պոնտոս ծովու՝ առ երի Սարմատիոյ. և ունի Եգեր փոքր՝ աշխարհս չորս. զՄառնեղիտ. զԱգուիւիկէ. զԼխազիւ. զՃանիւ, որք են Խաւարք: Ունի լերինս բազումս. և գետս. և

գաւառս. և քաղաքս. և բերդս. և այլ
գիւղաքաղաքս, և այլ վաճառատեղիս ։

Իբերիայ, այսինքն է՝ Վիրք. յելից կա-
լով Եգերայ, առ երի Սարմատիոյ՝ առ
Կովկասու, մինչև ցաղուանից սահման
առ Կուր գետովն՝ ուր են՝ ի Վիրս
այսոքիկ. Կղարջք. Արտահան. Շաւ-
շէթ. Ջաւախ. Սամցխէ. Աճարա.
Թուրգա. Վալթիսխ. Տանեկասխ.
Մանկղեաց փոր. Քուէշփոր. Փող-
նափոր. Թրեղք. Կանգարք. Տաշիր.
Խաչաւ, և Դուման. Իսոխխի. Քո-
տիթ. Կրիղխ. Կոսխ. Սածխումէթ.
Կոռւէթ. Էրծայ. Խերկ. Թխանէթ.
Կանխոխ. Ցխնաաձմայ. Բաղալէթ.
Ծափան. Քեթ. Ջելթ. Վելիցխէ.
Քուշէգա. Շալբ. Պարուար. Ծո-
բափոր. Ջորափոր. Խանցխի. և Քա-
ղաք Վրաց Տփխիս. Շամշովղէ. Մխե-
թայ, ուր մի խաչն է ։ Ունի և բերդս,
և գետս, և ծովս լի ձկամբք ։

Ալբանիայ. այսինքն Աղուանք՝ յելից
կալով Վրաց, առ երի Սարմատիոյ՝ առ
Կովկասու մինչև ցկասպից ծով, և ըր
Հայոց սահմանաւ առ Կուր գետով ։ Ե-
ունի Աղուանք՝ դաշտս արգաւանդս.
և գետս բազումս, և եղեգունդս հր
զօրս. և քաղաքս, և բերդս ։ և գա-
ւառք են այսոքիկ. Նիրուխ. Քան-

բե-

րեճան · Հոգմաղ · Շաքէդ · Խոռ · Շաքէ ոստան · Համբուսի · Մարծպանան · Քաղաքաշտ · Իրաղական · և այլք գաւառք, զորս 'ի Հայոց հանեալ են · Շիկաշէն · Գարդման · Կողթ · Քուստի · Փառնէս · Կողթաղուռէ · Զաւէ · Թուկրաստակ · Ուտոռաստակ · Ռոտպայիակ · Մեծ կափանք · Մեծ Իրանք · Պարծկանք · Միխանք · Պխանք · Հարջլանք · Վակունիք · Փոքր հանանդ · Ըստխանկանն · Ուտոստոստոստոտի · Բերձոր · Ստաստուռ, մինչև ցհարնուն Երասխայ 'ի կուր գետ:

Մեծ Հայք՝ յելից կողմ Կապուտափոյ, և փոքու Հայոց՝ առ Եփրատ գետով, մերձ 'ի Տոռոս լեառն, որ բաժանէ զնա 'ի միջագետաց: Են 'ի հարաւոյ՝ սահմանի առ Ասորեստանիւ · և շառնայ առ Ատրպատականաւ ընդ Մարս՝ մինչև 'ի մուտս Երասխայ 'ի կասպից ծով: Իսկ ընդ հիւսիսոյ՝ առ Իբերկողմ Աղուանից, և Վրաց · և Եգերացւոց՝ մինչև յնոյն դարձուածն Եփրատայ 'ի հարաւ կոյս: և ունի Հայք լերինս անուանիս, և գետս մեծամեծս՝ և մանուանս, և ծովակս երեք: Են ունի Մեծ Հայք՝ փոքր աշխարհս աւան և վեց · որք են այսոքիկ:

Առաջին՝ Բարձր Հայք · այսինքն՝ Կար

նոյ կողմն։ Չորրորդ Հայք. Աղձնիք. Տուրուբերան. Մոկք. Կորճայք. Պարսկահայք. Վասպուրականք. Սիւնիք. Արցախ. Փայտակարան. Ուտիայ. Գուգարք. Տայք. Արարատ.

*Արդ կամիմ զսոսա մանրամասնաբար պատմել. թէ և սակաւ ինչ աշխարհացս ՚ի վեր և ՚ի ստորև։*

Որք ունի բարձր Հայք գաւառս ինն. Դարանաղի. Առիւծ. Մնձուր. Եկեղեաց. Մանանաղի. Դերջան. Սպեր. Շաղգոմք. Կարին։ և ըստ անուանց արդարև՝ բարձր է Հայք քան զամ երկիր. քանզի Դ չորս կողմանս արձակէ գետս։ Ունի և լերինս երեք. և երէս բազումս. և հաւս պիտանիս, և ջերմուկս, և աղս, և զայլ պարարտութիւնս. և քաղաք զԿարնոյ, որ է Թէոդուպօլիս։

Չորրորդ Հայք՝ յերի կայ բարձր Հայոց. և գաւառք են ՚ի նմա ութն. Խորձէն. Հաշտեանք. Բաղնատուն. Բալահովիտ. Ծոփք. Ճաղախ. Հանձիթ. Գորեք. Գեղիկ։ Եւ ունի չորրորդ Հայք՝ բերդս. և գետս. և լերինս. և բիւրեղս։ ունի և երէս, և հաւս, և ձկունս. և ՚ի գազանաց զԱռիւծ։

Աղձնիք՝ առ Տիգրիս գետով կայ · գա- ւառս ունի տասն · զԱրզն · զՆփըր կերտ · զՔեղ · զԿեթէկ · զՏատիկ · զԱղձնեաց ձոր · զԽերհեթս · զԳը- ղեխ · զՍալնոյ ձոր · և զՍատուն : Ու- նի զնաւթ , և զերկաթ , առաւել և զխիթոր · և հաւ՝ զԳռեղակ :

Տուրուբերան · յերրի կայ չորրորդ Հայ- ոց · և գաւառք են 'ի նմա տասն և վեց : Խոյթ · Ասպականունիք · Տարօն · Աշմունիք · Մ՟արդաղի · Դասնաւորք · Տուարածատափ · Դալառ · Հարք · Վարաժնունիք · Բզնունիք · Երևարք · Աղիովիտ · Ապահունիք · Տկորի · Խոր- խոռունիք · Ունի և ծով զԲզնունեաց · յերկայն հարիւր մղոն , և 'ի լայնն վաթ- սուն : Ունի և զդազպէ · և զմեղր · և զմաշկամորդ · և զսպիտակ նաւթ · և զերկաթ ·

Մոկք՝ յելից կալով Աղձնեաց · ունի ամուրս Տորոս լերինն · գաւառս ունի ինն · զԽշայր · զՄ՟իւս զԻշայր · և զԻ- շոց գաւառ · զԱռանենից ձոր · զՄ՟ի- ջս · զԱռանձնակ մոկս · զԱրքայից գա- ւառ · զԱրգաստովիտ · զՃնխաձոր : Ունի և մրգայ՝ զՀրշակ ( գանհրաշակ ) · և զմանրագոր · և 'ի գազանաց՝ զխնձ- ղեղնցկախայտուց · և 'ի հաւուց՝ ըղ- հաւքա :

Կորճայք՝ յելից կայ Մոկաց առ Ասորեստանիւ։ և Գաւառս ունի տասն և մէկ . զԿորդուս . զԿոգրիս . զԱյրուանս . զՄոգողանս . զՊաքրանս . ըՆկարթունիս . զՃահուկ . զփոքր աղբակ . և ունի զԱռնիկ . և 'ի պողոց Շաղանակ ։

Պարսկահայք՝ յելից կայ Կորճէից , և առ Ատրպատականաւ ։ Գաւառս ունի ինն . Այլի , որ է Կուրիճան . Մարի . Թրակի . Աջուէրս . Ըռնա . Տանբեր . Զարեհաւան . Զարաւանդ . Հեր ։ և ունի երէ՝ զՑլա . և զԱյծեամն ։

Վասպուրական է՝ 'ի մտից Պարսկահայոց , և առ երի Կորճէից ։ Գաւառք են նորա երեսուն և եօթն , և են այսոքիկ . Ըռշտունիք . Տոսբ . Բուզունիք . Արճիշակովիտ . Աղաւիս . Բառիզակովիտ . Կաղանովիտ . Գառնի . Բալախովիտ . Առբերանի . Բուժունիք . Առնոյոտն . Անձեւացիք . Աստրպատունիք . Երուանդունիք . Մարդաստան . Արտազակէ . Աղբակ մեծ . Անձախաձոր . Թոռնաւան . Ճուաշռոտ . Կրճունիք . Մեծնունիք . Պալունիք . Գուկան . Աղանդռոտ . Պարսպատունիք . Արտաշիսեան . Արտաւանեան . Բաքան . Գաբիթեան . Գազրիկէն . Տանկրիյն . Վարաժնունիք . Գողթն

գինեւեա․ Նախիջեւան յորում քաղաքն է, և Մարանդ․

Սիւնիք՝ յելից կայ Արարատայ ընդ մէջ Երասխայ, և Արցախայ․ և ունի գաւառս երկոտասան․ Երնջակ․ Ջահուկ․ Վայոց ձոր․ Գեղարքունի․ և ծովն Սոտք․ Աղահէճք․ Ծղուկք․ Արանդ․ Բաղքձորք․ Արեւիք․ Սիսական․ լինի 'ի նմա մուրտ, և դերբերի․ և նուռն, և ամուր տեղիք․

Արցախ՝ յերի կայ Սիւնեաց, և գաւառք են նորա տասն և երկու․ զոր Աղուանք ունին։ Միւս Հարանդ․ Վակունիք․ Բերդաձոր․ Մեծ իրանք․ Մեծ կուանք․ Հարճլանք․ Մուխանք․ Պիանք․ Պայծկանք․ Սիսական․ Քուստակ․ Քաստիմ․ փառնէս․ Կոխթ, յորում լինի քարախունկ։

Փայտակարան՝ յելից կայ Ուտեաց առ Երասխաւ։ Գաւառս ունի տասն և երկու, զոր այժմ Ատրպատականք ունին․ Հրաքոտ․ Պերոժ․ Վարդանակերտ․ Եօթնփորականն բագինք։ ունի Ուտիբաղայ․ Բաղանռոտ․ Առոս․ Բիժանհանհանի․ Ալթլի․ Բագաւան․ Սպանդարանպերոժ․ Որմզդպերոժ․ Ալեւան։ լինի 'ի նմա Բամբակ անբաւ, և Գարի ինքնաբոյս։

Ուտի՛ առ մօտ կայ Երասխայ, ընդ մէջ Արցախայ, և Կուր գետոյ։ ունի գաւառս՝ զոր Աղուանք ունին եօթն. Աթանռոտ. Տռի. Տոսպացեան. Աղուէ. Տուչքատակ. Գարդման. Շիկաշէն. Ուտի առանձնական, յորում Պարտաւ քաղաք։ լինի 'ի նմա Ջիթենի, Վարնկենի. և 'ի հաւուց կատակ։

Գուգարք՛ 'ի մօտից կայ Ուտիայ. և ունի գաւառս ինն, զոր Վիրք ունին։ Ձորոցփոր. Ծոբոփոր. Կողբոփոր. Տաշիր. Թռեղք. Կանգարք. Արտահանք. Ջաւախք. Կղարջք։ Լինի 'ի նըմա Անալուծ. և Հաճարածառ. և Սերգեխ. և Տոսախ։

Տայք՛ առ երի կայ Գուգարաց, ամրոցօք և բերդօք կառուցեալ։ Եւ ունի գաւառս ինն. զԿող. զԲերդացփոր։ և զՊարտիզացփոր. զԾակատս. զԲուխայ. զՈքաղէ. զԱզորդ. զԿափոր։ Եւ լինի 'ի Տայս՛ Թուզ, և Նուռն. Աղտոր. Սերկևիլ. Պողախակ, և Նուշ։

Այրարատ՛ 'ի մէջ կայ յառաջասացեալ աշխարհացդ։ և գաւառք են 'ի նմա քսան. Բասենք. Գաբեղեանք. Արեղեանք. Վաճաղունիք. Արշարունիք. Բագրևանդ. Ծաղկոտն. Շիրակ. Վանանդ. Արագածոտն. Ծակատք. Մա

սեւացոտն · Կոգովիտ · Աշոցք · Նիգ. Կոտայք · Մազազ · Վարաժնունիք Ոստանն Դվնայ՝ մինչեւ ցդաշտն Շարուր: Եւ՛ ունի Արարատ լերինս, եւ դաշտս, եւ զմեծ պարարտութիւն . եւ ծովակն Գայլատոյ : Եւ՛ որդն սիղուբերին յորմնատոյ, առ՛ի զարդ կարմրութեան գունոյ : Եւ Մայր եկեղեցին՝ ի Թագաւորաքնակ՝ եւ յարքայանիստ Վաղարշապատ քաղաքի :

Այս Խոփարէցան ԶՄ Հայոց :

Ասորիք՝ յելից կալով խուժանաց ծովուն, եւ հիւսիսոյ հրէաստանի : եւ ունին Ասորիք փոքր Ծա ութն . եւ լերինս անուանիս՝ զԼիբանան, եւ ըզ Կարմեղոս . եւ գետ հզօր՝ զՅորդանան . եւ քաղաքս բազումս . եւ Մայրաքաղաք՝ զԱնտիոք . եւ զԴամասկոս . ըզ Կեսարիմ . զՍամարիայ . եւ գրուն երկու . եւ վայրս ընդարձակս , եւ պիտանիս , եւ բարիս :

Հրէաստան՝ յելից կալով փիւնիկական Պիղագոսին, եւ սահմանի Եգիպտոսիւ . եւ Ապառաժ Արաբիաւ : եւ ունի Հրէաստան՝ աշխարհս երեք . զԳալիլիայ . զՍամարիայ . զԵդովմայ : եւ Լիճս երկու . զՏիբերիադա , եւ զՄեռեալ ծովն . եւ գետ՝ զՅորդանան . եւ

մայրաքաղաք՝ զոքն Եկէմ։ Եւ է Հրէաս
տան քաղցրաբեր, և պտղալից. և է ա-
նուշահոտ, որ բղխէ զկաթն և զմեղր։

Արաբիա Ապառաժն՝ յելից կողմ
Եգիպտոսի, և արևմտեան ծոցին կար
միր ծովուն, ընդ որ անցին էին. յե
րի կողմ Ասորւոց, և Հրէաստանի։
Եւ ունի Արաբիայ Ապառաժ՝ փոքր աշ
խարհս հինգ. զՏաճկաստան. և ըզ
Փառանիտիս, ուր դուռն Աբրահամու
բաջաղեն. և այլս երեք աշխարհս.
և գետս ոչ մի.

Միջագետս՝ յելից կողմ Ասորւոց առ
Եփրատ գետով. և մօտ Ասորեստա
նի. առ Դկլաթ գետովն. յերի կողմ
Մեծ Հայոց։ Ունի լերինս երկու. և
գետս երկու. և քաղաքս բազումս.
յորոց մինն է Ուռհայ, որ անձե-
ռագործ Պատկեր փրկչին։

Բաբիլոն՝ յերի կողմ Միջագետաց
առ Կիւղաւ, մինչև ցՊարսկային ծոցն։
և ունի աշխարհս չորս. զԿոզա. զՊառ
րա. և զԲաբիլոն. զՏիգրոն. և գետս
ունի զԵփրատայ վտակն, և զԴկլա
թայ. ունի և այլ քաղաքս բազումս՝
և գաւառս. և լինի 'ի սահմանս այսո
րիկ՝ աւն Սարգիոն, և Ոսկեքար։ Եւ է
Բաբելոն ամենայնից վաճառօք, և եկբ

նաւուց 'ի Հնդկաց, և յամենայն կող_մանց յարևելից:

Անապատն Արաբիա՝ յերի կալով մի_ջագետաց ընդ հիւսիսոյ. յելից կա_լով Ապառաժ Արաբիոյ, և 'ի մտից Խուժաստանի և ունի Արաբիա ազգս՝ ինն. բայց լեառն, գետ և ոչ մի:

Երջանիկն Արաբիա. յերի կալով Ա_պառաժ, և Անապատն Արաբիոյ. մտա_նէ ընդ մէջ խորշից կարմիր ծովուն որ պէս ցամաք կղզի. և ունի յինքեան ազգ մի. և գաւառս տասն և չորս. լե_րինս տասն. գետս չորս. աղբիւրս մի. և կղզիս բազումս. և աշխարհ ամենա_բեր և ամենագիւտ. և է որ յիւրմէ աշխարհէն է, և է որ 'ի վաճառաց ե_կեալ՝ 'ի Չինաց, և 'ի Հնդկաց. գտա_նի անդ ոսկի, և ակունք պատուականք. խունկք բազումք. և իւղք անուշունք. փայտք անփուտք. և անտի էր Տիկինն Սաբայ. և բնակիչք աշխարհին ոմանք քաղաքականք, և ոմանք սպխտականք. Թխագոյնք քան զմեզ. և իւղք անոյշք 'ի նմա, և ծաղիկք տասն և վեց. դշխա_լի. Զափու. Մաղաղ. Խախակ. Քե_դի. Ախունա. Խալար. Բուխտակ. Նարդոս. Բալասան. Բան. Յասմիկ. Նարդան. Վարդ. Մանուշակ. Մարզգուշ:

Մարք.

Մարք, որք կոչին Քուստիքապկոխք՝ յերի կողմ Հայոց, և առ երի Կազբից ծովուն։ ունի աշխարհս գաւառս ինն. զԱտրպատական. զՌէ. զԳիլան. ըզ Մուկան. զԴիլումն. զՋհմաստան. զԴամբրվար. զՍպարաստան. զԱմլ. զՔշօշ. զՌուան։ Ունի և լերինս և գետս. և զծովակն՝ որ կոչի Քապոտան. ունի և քաղաքս բազումս. յորոց մինն Գանձակ Շահաստան։

Կորճաստան՝ որք կոչին Ասորեստան. այսինքն՝ Մուծղ. յելից կողմ Միջագետաց՝ առ երի Հայոց։ ունի լերինս և գետս. և քաղաք զՆինուէ։

Ելիմացիք են, որք կոչին Քուստիխորասան. յելից կողմ Դեկղաթայ. և 'ի մօտից Պարսից։ Ըստ ունին Ելիմացիք աշխարհս փոքունս գաւառս. զԽուժաստան. զՍաժ. զՄասպան. զՄիհրան. զՔրտակ. զՔաշտար. զԿարմական. զԵրանաստան. զԿարկաւատ. զՆոտարտ. զՇիրական. զՄարձին. զԱրհէն։ և ունի և քաղաքս հինգս. և գետս չորս. յորոց մինն է Գունդիշապուհ, յորում աղնիւ Շաքարն գործեն. ունի և կղզիս երկու հանդէպ իւր՝ 'ի Պարսկային ծոցին։

Պարսք՝ որք կոչին Քուստինեմռող.

յելից կալով Խուժաստանի , և առ երի Մարաց․ ունի յինքեան փոքր աշխարհս քառասն․ զՊարս․ զՍպահան․ զՄէշուն․ զՀակար․ զՊանայիտ․ ըղԿրման․ զԿուրան․ զՄակուրան․ ըղՍնդ․ զՀնդ․ զՄրան․ զՊետվաշտ․ զՍագաստան․ զԱպլաստան․ զԻլեր․ զՄեզ․ զՄուհիկ․ զՄատուն․ զԽոզեհրաստան․ զՊալհ․ զԼըրուհայ ։ ունի և գետս , և քաղաքս բազումս․ յորոց մինն է՝ Թևէզիր պարհսան քաղաք , յորում այնին Մարգարիտն ելանէ․ և Գոհարք մարգարտին՝ այս է դրան վէց գանդեան․ արժէ քառասուն հազար Գուճկայ․ հինգ հարիւր․ Մեծութիւն երեք դանկա․ չորս Պարմուշքա․ Պարմուշխա․ Հաւթագրամ․ Հաշտագրամ․ Դուահագրամ։

Արիք , որք կոչին Քուսան Խորասան․ յերի կալով Մարաց , և Պարսից , մինչև ցՀնդիկս․ և յերի Վրկանի ծովուն ։ Եւ աշխարհք են Արաց այսոքիկ․ Կոմշ․ Վրկան․ Ապրշահր․ Մրրում․ Արուաստ․ Հրեհատեշան․ Նըշտիմանակ․ Բժնիճ․ Սաղկան․ Գավկան․ Անսպհ․ Հրում․ զԱմբիւրոս․ Նախճեր․ Գզին․ Ասազակ․ Վարջան․ Մանսան․ Զակաստան․ Բահղ․ որք են Պարթևք․ Դուլման․ Լարիմանակ․ Շերի․ Բարիկան․ Գոմրոն․

Ունին Արիք · լերինս, և գետս, և կղզիս բազումս · լինի Հրամուզկ, թէ պէտ և ոչ ազնիւ · և կղզի մի է հանդէպ Արեաց ՚ի Հնդկաց ծովուն, յորում թզուկք լինին՝ երբեմն թզեան հասակաւ · որք և պատերազմին ընդ խորթոց հաւուց՝ վասն ձուածկելոյ նոցա զանդաստանս թզկաց ։

Սկիւթիա՝ որք են Ապախտարք · այսինքն՝ Թուրքք · որք սկսանին Էթիլ գետոյ մինչև ցԻմաւոն լեառն · և անդր ձգի մինչև ցՃենս ։ և Իմաւոն է լեառն բարձր, և երկայն քան զամ լերինս · և ունի Սկիւթիա ազգս բազմաւն և չորս Սոգդիք · Թուխարիք · Հեպթաղք · և այլք Խուժադուժք անուանք ։ Ունի Սկիւթիա լերինս · և գետս բազումս և հորս · և դաշտս անապատս · և ջերմ երկիր և անջուր · և է ՚ի նմա հը բազոյն դաշտ · և են Սոգդիք՝ հարուստք և արուեստաւորք, վաճառականք, որք բնակեալք են ՚ի միջ Թուրքաստանի, և Արեաց աշխարհին ։

Հնդկաստան՝ յելից կողմ Արեաց աշխարհին, և առ երի Սկիւթացւոյն · և է Հնդիկք բաժանեալ յերկուս աշխարհս, զորս բաժանէ Գանգէս գետ, որ է Փիսոն · և արևմտեան կողմն ունի ազգս յիսուն և հինգ · իսկ արևե_

լեռանն՝ եօթնանասուն և երկու. ոմանք Մարդակերք են. և ոմանք Վայրենակերք. ոմանք Այգեորք. և այլք կարճահաանկք, Տափակաքիթք, Լայներեսք, Այխտակք. և ոմանք Մերկք խմատակք, որք գործս անիրաւութե ոչ գործեն, և զմարմինս կենդանեաց ոչ ուտեն: Ունին Հնդիկք լերինս, և գետս, և կղզիս բազումս. լինի 'ի Հընդիկս երբ Յամօրանման արեղքեր, որ ապանանէ զԱռիւծ. և Հրեշ էրէ. և այլ գազան նման Առիւծու. բայց կընճիթն նուրբ է, և երկայն. և Ընձուղտք. և Կորեանք. և Կապիկք. և Աքաղաղք փետրամօրուսք. և փիղք. և Վագերք. և Վիշապք. մեծ Արջմունք. և Մրջմընառիւծք. և Մկունք. Բեշկ մշկայ. և Կոկորդիլ գազան. և Միեղջերու, որ է մեծ քան զձի գազանս, և 'ի վերայ ոլինն ճանք. և զփիղն լեղուով Սպանանէ. և Պապկուտ հաւ. և Մուշկ երէ. և Եղջ եղջերաւոր: Լինի անդ Ուկի. Արծաթ. Պղինձ. Անագ. Մարգարիտ. և Ակն ամենագոհար: Լինի և Պղպեղ. և Սնդրուկէղ. և ամ Բոլաճառք: Ջալուէա. փառանգամուշկ. Քաֆուր. Ջանդան. Նայիբուակ. Հրրուակ. Գազերբուակ. Գոյխբուակ. կասխմոն. Գոլաղակ. Ճաչաւոր. Մարգարիչար. և բազումք դեղք բժշկականք: և ռուհարբ հալուէից

հոլա·

ջորս, Ինդրէ. Սանդր. Աստարաղ. Ժե-
ռաուոր. Ծակոտկէն՝ լեռն արժէ եօթն
դահեկան. Ծամփիփարխայ. Նման է
ծանր, լեռն արժէ չորս դահեկան։
Քողակ, չէկ է և թեթև. և արժէ
լեռն չորս դահեկան։

Տապրոբանիա՝ է մեծ կղզի քան զամ
կղզի. հազար և հարիւր մղոն երկայն
է, հինգ հարիւր և տասն և 'ի լայնն,
յելից կալով։ և ունի այլ կղզիս շուրջ
զիւրեաւ մանունս, հազար երեք հա_
րիւր եօթանասուն և երկու. ունի և
լերինս, և գետս, և ազգս տասն և եր
կու։ Լինի 'ի նմա Ոսկի, և Արծաթ, և
Ակունք պատուականք. և Բոլիձայք.
փիղք, և Վագերք. և արք աշխարհին
վարսիւք կնոջ պատկեն զգլուխս իւր_
եանց։ Աստ ասեն զնկուանն սատանայի։

Ճենաստան, յելից կալով Սկիւթիոյ
մինչև յանծանօթ երկիր։ Եւ է Ճենաս
տան ընդարձակ դաշտ տարածեալ, և
են 'ի նմա ազգք քսան և ինն. յորոց
մինն մարդակերք։ Եւ ունի Ճենք լե
րինս, և գետս քաղուսա. լինի 'ի Ճենաց
աշխարհին՝ Դարիճենիկ. և Հոռոքոտակ.
և Քուռիճենիկ. և կասիման. և Սրէ_
կոն։ Ունի և Հրէշ, և Մուշկ. և Սիրա
մարգ շատ. Բրքում անբաւ. Ապրի
շում շատ, և աղնիւ. վաճառոյ և բնակիչքն

արուես

արուեստաւորք, կերպարագործք, հարուստք, ընչեղք. որոց Արքայն կոչի Ճերմակաւոր, որ նստի ՝ի քաղաքին Սե-ռխոյ՝ առ անծանօթ երկրաւ:

Մենեւագուցն՝ առ երի կալով Ճենաց մինչեւ ցանծանօթ երկիր, յորում բնակեալք են ազգք եօթն: Ունի լերինս, և գետս բազումս. բայց անտի յանծանօթ երկիրն որ ինչ պատմի, անհաւատալի է: Գազանք անծանօթ մարդակերպք. կիսանձնեայք. երկգլխիք. վեցձեռնիք. փոկատունք. միջապատոտունք. կիսահաւք. կիսանդամք. անգլուխք:

Այս [illegible]

---

Կ Հա կամիմ զլաւի աշխարհին համառօտել զմշտնջենաւորութիւն ուղղեկաբար, աշխարհագրական գրութեամբ:

՚Ի դուռնայ մղոն երկու հարիւր ՝ի Կարնոյ քաղաքէ.

Անտի մղոն հարիւր և քսան ՝ի փոքր աշխարհն Հայոց, և Յունաց:

Անտի մղոն բնաւորն ՝ի Կոստանդնեաբերդն:

Անտի մղոն հարիւր ՝ի Նախիջեւան:

Անտի մղոն ութսուն յԱմասիայ:

Անտի մղոն հարիւր և երեսուն 'ի Գանդրայ :

Անտի մղոն ութսուն յԱնկիւրիայ :

Անտի մղոն երեք հարիւր քսան 'ի Կոստանդինուպօլիս :

Անտի մղոն վեց հազար 'ի Հռոմ :

'ի Դուռնայ մղոն հարիւր և եօթանասուն 'ի Խլաթ :

Անտի մղոն ութսուն 'ի Փռիժմար :

Անտի մղոն հարիւր և ութսուն 'ի յՈւռհայ :

Անտի մղոն քառասուն յԵփրատ գետ :

Անտի մղոն հարիւր և յիսունն յԱմասիայ :

Անտի մղոն հարիւր 'ի Դամասկոս :

